



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 23 » 11 2020թ.

№ 08/ԼԱ/ - 500

Նոյեմբերի 16-22-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Նոյեմբերի 16-17-ին, 22-ին՝ առանձին շրջաններում, 18-21-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Արագած բլ-ում՝ 20մմ, Մասրիկում՝ 15մմ, Ջերմուկում՝ 12մմ, Ճամբարակում, Անանուն լքբ-ում՝ 11մմ, Տաշիրում՝ 10մմ, մնացած շրջաններում՝ 4-9մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը նոյեմբերի 15-17-ին ցածր է եղել նորմայից 1-2, 18-ին, 22-ին եղել է նորմայի սահմաններում, 19-21-ին նորմայից բարձր է եղել 1-2 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 15-ին: Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում գրանցվել է +12...+14°C, Լոռիում, Տավուշում՝ +9...+12°C, Սյունիքի նախալեռներում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +7...+10°C աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 22-ին: Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում գրանցվել է՝ -2...-7°C (Աշոցքում՝ -9°C), Սյունիքի նախալեռներում, Լոռիում՝ -2...-6°C (Տաշիրում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում, Տավուշում, Սյունիքի հովիտներում՝ -2...+1°C, (Դիլիջանում՝ -3°C):

Նոյեմբերի 21-ին դիտվել է մառախուղ Ջերմուկում՝ 200մ տեսանելիությամբ:

Նոյեմբերի 22-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բլ-ում 33սմ, Պուշկինի լքբ-ում՝ 7սմ, Ճամբարակում և Վարդենյաց լքբ-ում՝ 4սմ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝ 1900.56մ (22.11.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է ծամ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյան
Հեռ.՝ 012-31-79-29